



ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Կ. ԽԱԶԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1918 ՆՈՅ. 18 — 1920 ԴԵԿ. 31

—♦♦♦—

Խ. ԳՈԼԻՍ

1921

Պայման. մ. Հովհաննեսի

614-88

Հ-24

31 MAY 2013

20 JUL 2026


~~370~~
~~2380.56~~

614-88 4Y.
Z-24

2-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱռավարության հրաման

1004
15497



ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Կ. ԽԱԶԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1918 ՆՈՅ. 18 — 1920 ԴԵԿ. 31



Զինադադարեն ետքը, պատերազմին բացած աւելները՝ առաւելագոյն չափով կը ճնշէին հայ ժողովուրդը, որովհետեւ Աղքին ենթարկուած անհամընթաց աղէտներէն և զանգուածային չարդերէն վերապրող բեկորները՝ գունդ-գունդ կը խուժէին դէպի բնավայր ու Պոլիս Կը ստեղծուէր անօրինակ կացութիւն մը Անոնց բազմատեսակ ցաւերը ամոքելու հսկայ պահանջքը՝ անհրաժեշտութիւն մը կը դառնար, Պոլիս թէ Գաւառները Ամէն կողմ կը կազմուէին մարմններ՝ այդ պահանջքը լրացնելու սահմանուած։ Կ. Խաչի ոգին մարմնաւորող կազմակերպութեան մը պէտքը կը զգացուէր գերազանցօրէն, որովհետեւ տարազգեալներու և որբերու մէջ գտնուող հիւանդները և վիրաւորները դարձանի կը կարօտէին Այսպէս մարմնի կ'առնէ Հ. Կ. Խաչը՝ հետեւեալ կերպով։

Խուժմը մը աղդայիններ, որոնք Զինադադարի սկիզբը հիմնած էին Հայկական Լիլի, լսելով խուժմը մը Տիկիններու և Օբիորդներու Հ. Կ. Խաչ մը հիմնելու նպատակը, կը հրաւերեն ժողով մը, ուր սկզբունքով կ'ընդունուի Հ. Կ. Խաչի անհրաժեշտութիւնը, և Տիկիններուն պատրաստած ծրագիրը կը յանձնուի յատուկ Մամնախումբի մը, որպէսզի ամբողջական ծրագիր-Կանոնագիր մը կազմէ և բերէ երկրորդ Հնդչ. ժողովի մը։

Այս Մամնախումբը կարճ ժամանակուան մէջ կատարելով այդ գործը, կը ներկայացնէ զայն 1918 նոյ. 18ին՝ Բ. Հնդչ. ժողովին, ուր թեր ու դէմ վիճաբանութիւններէ ետքը, միտայինութեամբ առժամապէս կ'ընդունուի մշակուած ծրագիր-Կանոնագիրը, Այդ նիստին մէջ կ'ընարուին Հնդչ. ժողովի Ա. Դիւանը և Ա. Կեդը. Վարչութիւնը՝ հետեւեալ կերպով։

ԿԵԴՐ. ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Տիար Տիք. Վահրամ Թորգոնիեան Ա. Ասեմակիս

Տիկին Զարուհի Պահրի Բ. »

» Զապէլ Ալեանան Ա. Ասեմայակիս

Տիար Արամ Թորգոնիեան Բ. »

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ


Տիկին Մարի Սքամպուլեան	Ա. Ատենապէս
Տիւար Սրապ Սեւեան	Բ. *
Տիկին Զարուհի Գալէմբեարեան	Ա. Ատենադպիր
» Արաքսի Աճեւան	Բ. *
Տիւար Թագլուր Սուլիմասեան	Դանձապէս
» Առաքել Զարեան	Համարակալ
Տիկին Արուսեակ Բարսեղեան	
» Աղաւենի Նիկողոսեան	
» Աստինէ Սերվիչէն	
» Սիրանոյց Թրէնկեան	
Օրիորդ Մաքրուհի Ազարեան	Անդամներ
Տիւար Աւետիս Կիւլպէնի	
» Լեւոն Տէմիրնիպաշեան	
» Պօղոս Մըրթրլը	

Դիւանի ընտրութիւնը կը կատարուի վերոյիշեալ կերպով։ Վարչութեան առաջին նիստը տեղի կ'ունենայ 26 նոյ. 1918ին։ Նոյն տարուան 22 Դեկտ. թուակիր պաշտօնագիրով՝ Հ. Կ. Խաչի կազմակերպութիւնը կը ծանուցուի Ազգ. Կեդր. Վարչութեան, որ զայն կը ճանչնայ իբր հանրօգուտ հաստատութիւն։


Բ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պոլիս թէ գաւառներու մէջ կազմուող Մասնաճիւղերը՝ հետզհետէ վաւերացուելով կեղոնէն, կը սկսին գործունէութեան, հետապնդելով՝ Հ. Կ. Խաչի նպատակը։

Հ. Կ. Խաչը, իր կազմութեան առաջին օրէն՝ մտահոգութեան առարկայ կ'ընէ հայ արկածեալներու առողջապահութեան գործը՝ Ազգ. Պատրիարքարանը՝ 13 Դեկտ. 1918 թուակիր պաշտօնագիրով՝ Հ. Կ. Խաչին կը յանձնէ 14 տարեկանէն վեր որբուհներու և 5 տարեկանէն վար մանուկներու ինամածութիւնը, ինչ որ Տարագրելոցի և Որբախնամի գործունէութենէն դուրս էր այն ատեն կազմակերպութեան այս լրջանին՝ Տարագրելոց, Որբախնամ և Հ. Կ. Խաչի Մարմինները ձուլելով՝ միակ մարմին մը կազմելու առաջարկ կը բերուի Ազգ. Վարչութեան կողմէ, որուն համար մասնաւոր նիստ մը տեղի կ'ունենայ։ Հ. Կ. Խաչի Կեդր. Վարչութիւնը իր դիրքը Շշդելու համար 1919 թնկր. 31ին կը գումարէ բացառիկ էնդէ. Ժողով, ուր քուէի մեծամասնութիւնով կ'որոշուի առաջարկել՝ որ կազմուելիք Մարմինը «Հ. Կ. Խաչ» անունը կրէ, հակառակ պարագային՝ Հ. Կ. Խաչը կը պահէ իր անունը՝ իբր ուրոյն և անկախ մարմին, ազգ. նման մարմիններու հետ համերաշխօրէն աշխատելու առաջադրութիւնով։



Հ. Կ. ԽԱԶԻ ՇԻՏԼԻ ՄԱՍՆԱԳԻՒՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ



Հ. Կ. ԽԱԶԻ ՇԻՏԼԻ ՄԱՍՆԱԳԻՒՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ ՄԵԿ ՄՐԱՅԵ

Այս պայմաններով ներկայացուած առաջարկը անպատճենի
մատլան, Հ. Կ. Խաչը իր գործունէութիւնը կը շարունակէ:
1919 Տարեցրչանի Մարտ 3ի (Նոյ. Ժողովին մէջ՝ Կեդր. Վարչ-
չութեան անդամ կ'ընտրուին.

Տիար Ասեխան Գարաեան	Ա. Ասեխապէս
Տիկին Մարի Սրամպուլեան	Բ. >
» Զարուհի Գալէմիեարեան	Ա. Ասեխադպիր
Տիար Տիր. Բարսեղ Տինանեան	Բ. >
» Թագուր Սուբիասեան	Կանձապէս
» Արին Խնճինեան	Համարակալ
Տիկին Արուսեակ Բարսէղեան	
» Աստինէ Կիւմիւլէկերան	
» Պերնունի Գույլուննեան փառա	
Տիար Տիր. Աւետիս Նազգաւեան	
» Տիր. Կարապէս Եաղուպ	
» Տիր. Տիրան Գափամանի	
» Առաքել Չարեան	
» Հմայեակ Խոսրովիեան	
» Պերն Քէրէսրէննեան	
» Պենոն Տէյիրմէննեան	

Անդամներ

Գ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բ. Կեդր. Վարչութիւնը՝ 1 նոյ. 920—2 հնկ. 921 տեւող կեդր.
Նոյ. Ժողովի 4 նիստերուն ներկայացուց 1918 նոյ. 18էն — 1920 Դեկտ. 31
Նրանի Տեղեկագիրը՝ Մայր-Դիւանի և Կեդր. Վարչութեան շրջանը
Արագած բլլաւով՝ այդ նիստերուն մէջ բնարուեցան նոր կազմերը,
հետեւեալ կերպով.

ԿԵԴՐ. ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Տիար Տիր. Վահրամ Թողրումեան	Ա. Ասեխապէս
Տիկին Աղասի Նիկոլոսեան	Բ. >
Օր. Վարդիքեր Զուհաննեան	Ա. Ասեխադպիր
Տիար Տիր. Ցովիաննէս Ազրգեան	Բ. >

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տիկին Աստինէ Կիւմիւլէկերան	
» Դինար Մազլլմեան	
» Զարուհի Պանիք	
» Հրանոյց Յակոբեան	
» Մարի Սրամպուլեան	

Ժիար Տեք. Արմենակ Բարսեղիսան
 » » Աւետիս Նազգաւեան
 » » Կարապէս Եաղուպ
 » » Տիրան Գալիամանի
 » Առաքի Չամբեան
 » Գառնիկ Խնճինան
 » Թագուր Սուբիասեան
 » Լեւոն Թօ խալեան
 » Յովհաննէս Ամառունի
 » Յովհակի Լիժեան

որոնցմէ Տիկին Մաղլըմեան, Տքթ. Գագամանչի, Տքթ. Նազգաշեան,
 Տիար Թօփալեան, Տիար Ամատունի Հրած արելով՝ անոնց փախան ընտրուե-
 ցան Տիար Ստեփան Գարանան, Տիար Հրանդ Փափազեան, Տքթ. Անարէ
 Վահրամ, Տքթ. Միստքեան.

Դիւանը կը կազմեն.


Ժիար Ստեփան Գարանեան	Ա. Անհնապիս
Տիկին Մարի Արամպուլեան	Բ. »
» Զարուհի Պահրի	Ա. Անհնադպիր
Ժիար Տեք. Արմենակ Բարսեղիսան	Բ. »
» Թագուր Սուբիասեան	Գանձապիս

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՏԱՐ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՀԵՏ

Վարչութիւնը ջանադիր ըլլալով սերտ կապ ու յարաբերութիւն
 հաստատել Համաձայնական իշխանութիւններու և օտար բարենպատակ
 հաստատութիւններու հետ, կը յաջողի անոնց օժանդակութիւնը վայելել:


Ա. — Ժընէվի Միջազգ. Կ. Խաչը, իր գործունեութեան անցու-
 գարձերուն և օրակարգին տեղեակ ըրած է Հ. Կ. Խաչը, զրկելով շրջա-
 բերականներ Այսպէս, Հարցում ուղղած է՝ Աւկուսթա, Մարիս Ֆէօտո-
 րովնա և Շնոքէն Կայրուհիներու երեք «Փանուսերուն, ինչպէս նաեւ
 Նայթինկէլ պատուանշանին գործածութեան եղանակին մասին, որոնց
 շուրջը հարկ եղած ուստամափրութիւնները ընկելէ ետքը, Վարչութիւնս
 փութացած է իր կարծիքը հաղորդել Միջազգ. Կ. Խաչին: Ցունիս 14
 թուակիր շրջաբերականով՝ տեղեկացուցած է Հ. Կ. Խաչին՝ Միջ. Կ. Խաչի-
 ք. Համաժողովին՝ 1921 Մարտ 30ին յետաձուած թլլալը, և հրաւերած
 այդ թուականին ներկայացնել Հ. Կ. Խաչի գործունեութեան տեղեկագիրը:

Միջազգ. Կ. Խաչի կողմէ վաւերացուելու մասին Վարչութիւնս-
 սպասող եղած է Հայաստանի Կ. Խաչին վաւերացուելուն, անոր կապուե-
 լու համար Միջազգ. Կ. Խաչի կողմէ՝ հրաւեր եղած է արդէն Հայաս-
 տանի Կ. Խաչին, պաշտօնական ձեւակերպութիւնները լրացնելով՝ ներ-
 կայանալ Մարտի Խորհրդաժողովին, վաւերացուելու համար:



Հ. Կ. ԽԱԳԻ ԲԵՐՍԵՒ ՍԱՍՆԱՅԻՆ ԽԱՄԱՎԱՆԱՐ-ՑԱՄԱՎԱՆԱՐ ՀԱՄԱՐ

ՀԱՐԱԿ ԱԿ ԽՈՋԻ ՀԱՅՐԱՎԻ ՎԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՎԻ ՀԱՅՐԱՎԻ



Բ.— Թրանս. կ. Խաչը 2000 անկողինի կազմած նույրած է Հ. կ. Խաչին, որ զանանք բաժնած է իր հաստատութիւններուն:

Գ.— Մեջազգ. կ. Խաչի Արեւելքի ներկայացուցիչ Պ. Շապան ար Լարալիս՝ Կ'ապահովէ Պուլկարահայ կ. Խաչի նարժուն Հիւանդանոցին ձրիապէս Պոլխուն Տրապեզոն փիսադրութիւնը:

Դ.— Կեդր. Վարչութեան Հրաւերին վրայ, Ամերիկ. Նպաստամատոցի ներկայացուցիչներ կ'այցելեն պարեւրաբար Հ. կ. Խաչի հաստատութիւնները և իրենց գնահատութիւնը գործնականապէս կ'արտայատեն, ապահովելով Հ. կ. Խաչին՝ ամսական 500 սոկի նպաստ մը, 1919 Յուլիսին սկսելով, ինչպէս նաեւ արամագրելով հազարաւոր սոկի արժեքով նիւթելէններ:

Ե.— Անգլ. Իշխանութիւնը, Հ. կ. Խաչին այլապէս օգտակար ծառայութիւն մը մասուցած է, անոր արամագրութեան տակ դնելով, զանազան թաղերու մէջ, պէտք եղած շենքերը:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Յարաբերութիւն մշակուած է նաեւ արտասահման գանուող Հ. կ. Խաչի հետեւեալներուն հետ։ Պուլկարիայի, Պութշի, Նիւ Հօպօքընի, Լօզանի Հ. կ. Խաչի:

Վեճերապատառորդներու գարմանումն համար՝ ամէն կողմէ ուօ-սալ-վարսի մէծ պահանջմք և ինդրանք ըլլալուն, Կեդր. Վարչութեան դիմումն վրայ, Լօզանի Հ. կ. Խաչը այդ գեղեն զրկած է 290 տուփ, Լօզանի Հ. կ. Խաչը դրկած է նաեւ 500 ֆր.ի նուեր մը:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. ԽԱՉԻՆ ՀԵՏ

Վարչութիւնս Հայաստանի մէջ տիրող համաձարակին առեթով, 1919ի Տարեցը անին, 500 սոկի գեղ զրկած է Հայկական Կառավարութեան, որուն Արտաքին Գործերու նախարարութենէն ստացած է շնորհակալութեան զիր մը:

Հայաստանի կ. Խաչը իր չերմագին ողջոյնները զրկելով Պոլսի կ. Խաչին, կը զգացնէր «քինքն»ի մեծ կարուութիւն ունենալը՝ հայ բանակին և ժողովուրդին համար, ըսելով. «Այժմ մնանք չերից աւելի ենք կոտորում» քան թէ քաղցից»։ Կեդրոնս անմիջապէս մեծաքանակ «քինքն» փութացուց Հայաստան դիւ. Ներկայացուցիչ Պ. Ժահթաճեանի միջնով, Կեդրոնս կոչ ըրած ըլլալով նաեւ իզմերի Մամնաճիւղին՝ Հայաստան գեղ զրկելու, ան զոհացում տուած է այդ առաջարկին:

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ազգ. Կեդր. Վարչութիւնը՝ 27 Յնկ. 1920 թուակիր պաշտօնագիրով Կ'առաջարկէր Հ. կ. Խաչին՝ սուաննել Ազգ. Հիւանդանոցի վար-

Հունիսը, 5. Յթուածէ բաղկացած համաձայնագիրի մը համեմատ Երկար բանակցութիւններէ ետքը, Հ. Կ. Խաչը ստանձնեց Ազգ. Հիւանդանոցի վարչութիւններէ կազմելով՝ անդամէ բաղկացած Հոգարածութիւն մը որուն Հետի իրենք պատուիրակներով գումարուած նիստերուն մէջ մշակուեցան բարեկարգութեան ծրագիրներ, որոնց մէկ մասը արդէն գործադրութեան գրուած է, Հիւանդանոցը փրկելով իր աննախանձելի վիճակն Վերակազմութեան այդ աշխատանքը, հակառակ դժուարութիւններու և խոչընդուներու, կը շարունակուի տակաւին, և յուսալի է որ շատ չանցած, միջոցներու ներած չափով, Հիւանդանոցը սիտի տիրանայ փափաքելի դիրքի մք: Հ. Կ. Խաչը յաջողած է Հիւանդանոց փութացնել 7300 սոկի արժէքով նուերներ և դրամ:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ուրախալի է յայտնել որ՝ թէ՛ Հայ Բժշկական Մարմինը քնուհանպէս, և թէ՛ Հայ Բժշկական Միութիւնը, սիրայօժ ար տրամադրած են իրենց ծառայութիւնը Հ. Կ. Խաչին, այսպէս որ Մասնաճիւղերու բոլոր հաստատութիւնները, Պոլիս թէ գաւառաները, կը վայելեն կանոնաւոր աշխատակցութիւնը հայ բժշկական մէջ՝ Հայ բժշկական մէջ՝ Ուրախանամ աղդ: բոլոր հաստատութիւններուն մէջ՝ Հիւանդապահութիւններու զգալի պակասը նկատի առնուելով, Վարչութիւնս կազմակերպեց յայորդարար Հիւանդապահութեան 2 ֆասէն թացքներ, որոնց առաջինն՝ 17 և երկրորդին՝ 18 թեկնածուներ մասնակցեցան: Հայ Բժշկական Միութիւնը ազնուարար յանձնառու եղաւ իր թանկագին աշակցութիւնը նույիրելու այս ձեռնարկին, նշանակելով դասախոս բժիշկները, 13 նիւթերու համար: Այդ թեկնածուները կանոնաւորապէս Դասընթացքին հետեւելէ ետքը, քննութիւն անցուցին, և արդիւնքին համաձայն ստացան վկայական և յատկացուեցան պաշտօններու իրենց կարօտ եղող հաստատութիւններու մէջ:


ԴԵՂԱՐԱՆ

Կարճ ժամանակի ընթացքին իր գտած ընդունելութենէն քաջալերուած, Հ. Կ. Խաչը, իր կազմուելէն քիչ ետքը՝ կը յաջողի երեւան բերել իրը կենսական պէտք մը շեշտուող հաստատութիւն մը, իր Դեղարաննը, որ կը կազմուի գեղադոճներու և գեղօրէի վաճառական ներու նուերներու մթերքովք:


Դեղարանը կը հայթալթէ յաջորդարար կազմուող Մասնաճիւղերու, ինչպէս նաև Դալամթիսյի Տարագր. Կայանի Հիւանդաններուն դեղերը, ներգաղթի ամէնէն հրատապ շրջանին, Հ. Կ. Խաչի Դեղարանը մատուցած է անգնահատելի ծառայութիւն:

Դեղարանէն բաւականաչափ դեղ զբուած են՝ Հայաստան, կովկաս,





Հ. Կ. ԽԱՐԱ ԲԵՐՅԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՒՆԻ ՄԱՆՈՒՋԻՑ - ԴԱՐՄԱՆԱՏԱՆ ՄԵԿ ՃԱՌԱՐԱՐԱՆ



Հ. Կ. ԽԱՐԱ ԲԵՐՅԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՒՆԻ ՄԱՆՈՒՋԻՑ - ԴԱՐՄԱՆԱՏԱՆ ՄԵԿ ՃԱՌԱՐԱՐԱՆ

Ատա-Բագար, Էսկի-Շեհր, Սէօլէօդ, Պոլու, Ատանա, Հալէպ, Խօսոսթօ, Տարսոն, Զէյթուն, Պարտիզակի Ամերիկ. Որբանոցը, Տարսոնի Հ. Կ. Խաչի Մամաճիւղի Հիւանդանոցը, Դեղարանին մէջ խնամուած են 2000է աւելի թեթև հիւանդներ: 1919ին պատրաստուած են 3445 դեղագիրներ, իսկ 1920ին 5555, որով ընդամենը 9000 դեղագիրներ՝ վկայուած չքաւորնեռու, Ազգ. Խնամատարութենէն յանձնարարուած տարագիրներու, Հայաստան մեկնող զինուորներու, Որբանոցներու, եւլն.:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ

Կիլիկեան վերջին աղէտին պահուն, Հաճընի Մամաճիւղին կողմէ 24 Փետր. թուակիր օգնութեան կոչին պատասխանելով, Վարչութիւնս անմիջապէս 1500 սոկի փութացուցած է Ատանա, բաժնուելու համար Կիլիկիայի Մամաճիւղերուն միջոցով՝ Ատանայի, Հաճընի, Տէօրթ-Եօլի, Տարսոնի մէջ՝ արկածեալներուն:

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Էնդհ. Ժողովին մէջ, 1919 Հոկտ. 12ին, որոշուեցաւ Ծրագիր-Կանոնագիրը վերաքննել մասնաւոր Յանձնախումբի մը միջոցով, և այդ վերաքննուած Կանոնագիրին բազմագրուած օրինակիները զրկել Մամաճիւղերուն՝ անոնց դիտողութիւնը ստացուելու համար: Այդ որոշումին համեմատ, վերաքննուած ու բազմագրուած Կանոնագիրները զրկուեցան բոլոր Մամաճիւղերուն՝ Յանձնախումբը ստացուած դիտողութիւնները նկատի ունենալով և կատարելով վերջնական խմբագրութիւնը Ծրագիր-Կանոնագիրին, զայն ներկայացուց կեդր. Վարչութեան, որ ենթարկեց Էնդհ. Ժողովի վաւերացումին:

ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Հ. Կ. Խաչի հասոյթի աղբիւրները կը կազմեն՝ անդամավճարներ, նուիրատուութիւններ՝ դրամական և նիւթեղին, քաքառակի, նուիրատումսի, Օրացոյցի և նկարներու վաճառումէ գոյացած գումարներ, հանդէսի և թատրոնի արդիւնքներ: Դրամական նուիրատուութիւնները կ'երեւան՝ Կեդրոնի և Մամաճիւղերու հաշիւններուն մէջ:

Ա. — ՀԱՆԴԵՍ. — Հ. Կ. Խաչի կեդր. Վարչութիւնը՝ 1919 և 1920 երկու տարեցրաններու ընթացքին, Եերայի Մամաճիւղին գործակցութիւնովք սարքած է թեյ-նուագահանդէսներ, որոնց առաջինին հասոյթը եղած է 5000 սոկի, իսկ երկրորդինը 5300 սոկի: Այդ հանդէսներուն առաջինին իր հովանաւորութիւնը չնորհած է Զօր. Ֆրանշէ Տէքըրէ: իսկ երկրորդին՝ Հելենական Բարձր Քօմիսէր. Պ. Բանելօբուլօ: Հ. Կ. Խաչի բալոր Մամաճիւղերն ալ, Եերենց կարգին, կ'ունենան իրենց տարեկան հանդէսաները, որոնց ամէն մէկը, իր գտած չերմ ընդունելութիւնով, ապացոյցը

տուած է այն մեծ համակրութեան, զոր կը վայելէ Հ. Կ. Խաչը՝ հասարակութեան բոլոր խաւերուն մէջ անխտիր:

Բ.—ՕՐՈՅՈՅՑ.— Հ. Կ. Խաչի կազմութեան թուականէն՝ Վարչութիւնս իրը հասոյթի նկատելի ազրիքը մը՝ ձեւնարկած է նկարազարդուած Պատի Օրացոյցներու պատրաստութեան, որ առաջին տարին 1000 օրինակ տպագրուելով՝ չերմ ընդունելութեան արժանացած և քիչ ատենուան մէջ սպառած է: Վարչութիւնս 1920ի և 1921ի Օրացոյցներուն պատրաստութիւնն ալ կատարած է, աւելի բաղմաթիւ օրինակներով, և միշտ նոյն քաջալերութիւնը դատած:

Գ.—ՔՕՔԱԾՏ.— Որոշուեցաւ 1919 Օդ. 12ին բոլոր Մամնաճիւղերուն միջոցով քօքառատ բաշխել, հասոյթին 0/0 10 լ Դում-Դափուի Մամնաճիւղին Շարժուն Հիւանդանոցին յատկացուելու պայմանով: Արդիւնքը շատ փայլուն եղաւ: 1920 Մայիսին ալ քօքառատ բաշխուած է Աղդ, Հիւանդանոցի նպաստին, և տուած է 975 ոսկի հասոյթ, ինչ որ յանձնուած է Հիւանդանոցի մատուկին:

Դ.—ՆՈՒԷՐՆԵՐ.— Կեղրոնս ստացած է ամերիկահայ երգչուչիքին Խոզին Խոզ Զուլալեանի՝ Հ. Կ. Խաչի նպաստին տուած մէկ երգահանդեւսին հասոյթը, 760.44 տոլար, զոր Ամերիկեան նպաստամատոյցը կրկնած է:

Մանչէսթըրի Հ. Կանանց Էնկրաքցութիւնը դրկած է 2 տակառ խաղալիկ և շօքլայ:

Նիւ-Եօրքի Հայուհիներու կ. Խաչի լոկ-ը դրկած է 2 մատուկ զգեստեղին և դեղ:

ՍԱՍՆԱՃԻՒԵՐ

Հ. Կ. Խաչի կեդր, Վարչութեան գործունելութեան հետ զուգընթացաբար, թէ՛ Պոլս և թէ՛ գաւառները կազմուեցան Մամնաճիւղեր, որոնց՝ կեդրոնը ընծայեց իր նիւթեական ու բարոյական աշակցութիւնը, Մամնաճիւղերու գործունելութիւնը համապատասխան է Ծրագիր-Կանոննագիրին: իսկ մատակարարական գործերուն մէջ կ'առաջնորդուին՝ կեդրնիս կողմէ՝ միութեան ու գիւրութեան համար յատկապէս տպագրուած հրահանգին և 1-8 հաշուական ու վիճակագրական պաշտօնաթուղթերուն ցուցմունքէն: Կեդրոն և Մամնաճիւղեր, մշտական կապով երարու միացած, փոխագարձ գործակցութեան ողիսվ՝ ջանացած են Հ. Կ. Խաչի նպաստակը ծաւալել:

Հոս կ'ուրուագծենք Մամնաճիւղերու գործունելութեան խտացած պատկերը:


ՇԻՇԼԻՒ ՍԱՍՆԱՃԻՒՂ

Հիմուած է 1918 նոյ. 28ին, Հ. Կ. Կեղրոնին և զլի: Մամնաճիւղերուն հետ միաժամանակ: Գործունելութեան ձեւ բնորած է բանալ Հիւանդանոց մը, 10 անկողինոց, հաստատուած 1919 ինվ. 28ին, Ռուս



Հ. Կ. ԽԱԶԻ ՍԿՐԻՏՈՒՄ ՄԱՍՆԱՑԻԴՐԻՆ ԱՊԱՍԱՆԱՐԱԾ
(ԿԱԽԿԱ ՀՕՄ ԳՈԼԵՃԱ)

7. Կ. Խ. Խաջոյի կողմէն պատճենաբառ կազմված է 1976 թ. ՀՀ օգոստոսի 25-ին:



սական Հիւանդանոցին պատկանող 5 սենեակնոց յարկաբաժնի մը մէջ՝ անհնուեր գործակցութիւնով թաղին քիչիներուն ։ Կտած ընդունելու թենէն քաջալերուած և տեղացող անվերջ խնդրանքներուն գոհացում տալու համար՝ իր անկողիներու թիւը աւելցնելու ստիպուած, յաջողած է անդլ կառավարութեան միջոցով ձեռք բերել Բանկալթիկ պողոտային վրայ Փորեազ փողոցին անկիւնը գանուող քնդարձակ տունը, ուր փոխադրուած է Հիւանդանոցը 1919 Մայիս 23ին, 20 անկողինով Մասնաճիւղի Վարչութեան և Աղդ. Իշխանութեան համաձայնութիւնով, Հաստատութեան անկողիներուն թիւը Յունիսին կը բարձրացուի 70ի, տեղ տալու համար գաւառներէ բերուած գոնջ ու բորս 50 որբերու, որոնց անկողինի կազմաները և ճերմակեղինները, ինչպէս նաև եւրաքանչիւրն համար օրական 20 զրուշ պիտի տար Աղդ. Խնամատարութիւնը, Շաբաթը երկու օր Հիւանդանոցին մէջ խնամուած են նաև այցելու բոլոր հիւանդները, անխտիր, ձրիարար, կարօտներուն գեղազիրները պատրաստուելով կեղլոնի Դեղարանը, 1919 Սեպտ.ին Հիւանդանոցին մէջ կը բացուի Մայրանոց մը (Maternité) և վիրաբուժական բաժնի մը, 1920 Տարեցրանին, Որբանացներու բորսները գրեթէ վերջացած բյլալով, բորսաներու բաժնին գրցուած է, բայց հիւանդներու անկողիններուն թիւը բարձրացած է 30ի, ինչ որ երբեմ, սոխողական պահանջներու առիթով, մինչեւ 40 ալ եղած է, 1920 Օգոստոսին, Հիւանդանոցը փոխադրուած է Նշան-Թաշ, ուր կը գանուի հիմաւ Այդ թուականին որոշուած է Հաստատութեան մէջ բանալ նաև վճարուած հիւանդներու յատուկ 5 անկողինոց Յարկաբաժնի մը, ներքին թէ արտաքին հիւանդութիւններու յատուկ, ուր 11/2, 2 և 3 սոկի օրականով՝ հիւանդները կը ստանան օտար հաստատութիւններու մէջ 5, 10, 15 սոկի օրավարձով գարմանուած հիւանդներու յատուկ խնամք և մնունդ։ Այս բաժինին նպատակն է հասոյթի աղրիւր մը ապահովելով Հաստատութեան, դիւրացնել թշուառ հիւանդներու գարմանումովը ծանրաբեռնուած պիտուծէն, ինչպէս այս մէթոսը ընդունուած է Ռուսիայի, Զուիցերիայի և Պալքանեան երկիրներու մէջ։ Հաստատութեան հիւանդները կը զրկուեն Հ. Կ. Խաչի կեղլոններ, Աղդ. Խնամատարութենէն, Աղդ. Որբանացներէ, Տարագր. Կայաներէ, նաև քնդունուած են զանազան պաշտ. մարմիններէ կարուութեան վկայագիրներով զրկուած հիւանդներ։ Մաս տարի մը հերթապահ բժիշկի զրութիւնը որդեգրելէ ետքը, Հիւանդանոցը 1919 Սեպտ.էն ունեցած է իր մայուն բժիշկը, Տքթ. Գաստական, որ մինչեւ հիմա անձնութբութեամբ կը շարունակէ իր ամենօրեայ այցելութիւնը։ Ունի նաև իր ամենօրեայ վիրաբոյժը, Տքթ. Խանճեան, և իր կարող մասնագէտները՝ ամէն ճիւղերու համար։ Վիրաբուժական գործողութիւնները սմննութբարար կը կատարէ վիրաբուժական պետ Տքթ. Կ. Եաղոսպի։

Հաստատութեան ամսական պիտածէն, նախապէս 300 սոկիով

ԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

8 ՆՈՅԵՄԲԵՐ 1918 — 31 ԴԵԿԵMBER 1920

Ա. ԵՒ Բ. ՏԱՐԵՏՐՁԱՆՆԵՐ ՄԻԱՑՈՒԱԾ ՈՒ ԱՄՓՈՓՈՒ

Հ. Ա Ս Ա Ց Թ Ե Ր	Կեզր.	Բերա	Շիշի	Վոսիր	Մկնար	Գատը-Գիւղ	Գում-Գափու	Սամաթիա	Մաբրի-Գիւղ	Էտիրնէ	Փրինքիփօ	Բնդհ. Գումար
	Վարչութիւն					Գափու	Օ. Ո.	Օ. Ո.	Օ. Ո.	Գափու	Օ. Ո.	Օ. Ո.
Ամսավճար Նորացուութիւն Հանդէս Պատահական Նիրեղէն նուէր Առձամեայ հաշիւ Արտասահմանի եւ գաւառի Հ. Կ. Խ Ե Ր Ե Բ Օրացոյցի վաճառումէ Տոկոս Հ. Կ. Խ Կ Ա Վ Ր Ա Վ Ր Ե Բ Ե Լ Խաչէն հացազին	1175 13634 83 7452 20 3925 70 39 2796 47 172 91 108 02	2962 05 12077 92 1840 1448 20 1137 28 150 450	2888 90 3516 27 ^{1/2} 6607 74 215 32 ^{1/2} 617 92 ^{1/2} 100 100	272 89 517 90 6442 83 ^{1/2} 1935 58 ^{1/2} 1739 95 2752 87 901 71 ^{1/2}	1462 95 1579 03 481 38 592 25 ^{1/2} 513 41 ^{1/2} 150 80 1952 42	1733 25 1150 90 2983 41 ^{1/2} 301 60 727 448 40 1326 06 ^{1/2} 563 93 ^{1/2} 3424 94 755 18 ^{1/2} 145 29 66 30 592 25 ^{1/2} 513 41 ^{1/2} 116 386 75 349 53 627 81 281 26 ^{1/2} 2282 76 ^{1/2} 92 80 1020 70 254 50 19381 5739 3043 12205 43 41682 28 ^{1/2} 23554 14 19381 21 ^{3/4} 5739 13 ^{1/2} 3043 13 ^{1/4} 2796 47 172 91 108 02 10208 22 ^{1/2} 268	11615 99 1563 71 1572 32 ^{3/4} 886 41 ^{3/4} 1511 46 ^{1/4} 109 00 ^{1/4} 87 43 ^{1/2} 391 53 ^{1/2} 57 68 372 61 583 14 ^{3/4} 39 92 ^{1/2} 163 45 ^{3/4} 262 1707 73 ^{1/2} 200 91 267 57 595 71 ^{1/4} 105 09 208 20 1714 77 ^{1/4} 70 45 ^{1/4} 6 02 ^{1/2} 96 69 208 20 19 20 175 90 7 05 186 29 486 31 ^{1/2} 58 59 ^{1/2} 282 11 2 08 29 50	93 71 111 124 82 ^{1/2} 302 10 ^{1/4} 237 24 154 30 1086 65 ^{1/2} 399 36 ^{1/2} 12 17 64 18 ^{3/4} 300 71 6397 58 ^{3/4} 19 07 2606 07 2495 19 100 37 ^{1/2} 5208 78 ^{1/4} 19112 91 ^{1/4} 1714 77 ^{1/4} 3488 25 1789 33	3280 21 ^{3/4} 15 60 3152 77 ^{1/2} 5539 55 13526 41 ^{1/2} 1806 38 1266 55 6469 38 ^{1/2} 300 71 6397 58 ^{3/4} 19 07 2606 07 2495 19 5208 78 ^{1/4} 19112 91 ^{1/4} 1714 77 ^{1/4} 3488 25 1789 33	38508 87 ^{1/4} 2259 98 3152 77 ^{1/2} 5539 55 13526 41 ^{1/2} 1806 38 1266 55 6469 38 ^{1/2} 300 71 6397 58 ^{3/4} 19 07 2606 07 2495 19 5208 78 ^{1/4} 19112 91 ^{1/4} 1714 77 ^{1/4} 3488 25 1789 33		
Հ. Ա Տ Խ Ա Ց Թ Ե Ր	28 1089 06 ^{1/4} 1608 65 2300 39 17 42 ^{1/2} 374 74 1793 62 132 859 157 50 716 14 905 90 18037 90 ^{1/2} 908 64 1789 33	8739 58 ^{3/4} 1089 06 ^{1/4} 1608 65 3482 10 2165 48 ^{1/2} 404 56 653 73 ^{1/2} 1701 02 ^{1/2} 1639 50 ^{1/2} 711 98 ^{1/2} 236 46 320 30 82 170 73 778 21 ^{1/2} 1639 50 ^{1/2} 109 25 380 34 ^{1/2} 602 81 ^{1/2} 105 90 118 10 300	526 97 1563 71 1572 32 ^{3/4} 230 886 41 ^{3/4} 1511 46 ^{1/4} 109 00 ^{1/4} 87 43 ^{1/2} 391 53 ^{1/2} 57 68 372 61 583 14 ^{3/4} 39 92 ^{1/2} 163 45 ^{3/4} 262 1707 73 ^{1/2} 200 91 267 57 595 71 ^{1/4} 105 09 208 20 1714 77 ^{1/4} 70 45 ^{1/4} 6 02 ^{1/2} 96 69 208 20 19 20 175 90 7 05 186 29 486 31 ^{1/2} 58 59 ^{1/2} 282 11 2 08 29 50	961 88 ^{1/4} 125 70 11 90 144 82 ^{1/2} 86 40 199 30 154 30 1086 65 ^{1/2} 40 50 36 50 ^{1/2} 7 50 ^{1/2} 64 68 96 55 64 18 ^{3/4} 92 42 90 186 29 46 04 ^{1/2} 12 17 64 18 ^{3/4} 92 42 300 71 6397 58 ^{3/4} 19 07 2606 07 2495 19 100 37 ^{1/2} 5208 78 ^{1/4} 19112 91 ^{1/4} 1714 77 ^{1/4} 3488 25 1789 33	3303 86 ^{3/4} 763 66 847 60 109 00 ^{1/4} 1134 71 ^{1/2} 439 27 144 82 ^{1/2} 457 17 ^{1/4} 70 20 199 30 154 30 1086 65 ^{1/2} 40 50 36 50 ^{1/2} 7 50 ^{1/2} 64 68 96 55 64 18 ^{3/4} 92 42 300 71 6397 58 ^{3/4} 19 07 2606 07 2495 19 100 37 ^{1/2} 5208 78 ^{1/4} 19112 91 ^{1/4} 1714 77 ^{1/4} 3488 25 1789 33	3280 21 ^{3/4} 15 60 3152 77 ^{1/2} 5539 55 13526 41 ^{1/2} 1806 38 1266 55 6469 38 ^{1/2} 300 71 6397 58 ^{3/4} 19 07 2606 07 2495 19 5208 78 ^{1/4} 19112 91 ^{1/4} 1714 77 ^{1/4} 3488 25 1789 33						
Պատրաստութիւն Անկողնեղէն Զգեսէնէն Կարասի եւ անօր Ամսարաւակ եւ օրավարձ Փոխադրութիւն Գրենական եւ սպազրութ. Բժեկալան Վաղեանի թիւ Ճեցի վարձ Նորոգութիւն Զանազան ծախս Նպաստ Երջուն Հիւանդանց Առձամեայ հաշիւ Դեղարան	27275 95 2028 18	19342 28 273 17	17689 61 ^{1/2} 59 34	1661 20 ^{3/4} 62 83 ^{1/4} 1	21462 90	8266 49 582 09 ^{1/2} 226 69	6386 83 ^{1/2} 115 95 ^{1/2}	3715 32 128 83	1222 61 127 72	2679 18 210 35	5640 41 ^{1/2} 3816 16 ^{1/4}	115342 80 ^{1/4} 3816 16 ^{1/4}
Պատրաստութիւն Դեղազիրներ	9000 425	840 2497	3560 367	2136 1568	6726 2682	3917 4180	3600 3025	412 364	300 220	200 134	31364 15462	119158 96 ^{1/2}


սկսած, հետզետէ բարձրացած է 600ի, 800ի. իսկ ներկային մօտաւու բազէս 1000 ոսկի է։ Պաշտօնէութեան թիւն ալ՝ 5էն բարձրացած է այսօր 14ի։ Հիւանդանոցին գեղերը կը պատրաստուին կեդրոնի Դեղա բանին մէջ, թիւը եղած է 3560, Դարմանուած հիւանդներուն թիւն է 2497։

ԲԵՐԱՅԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ


Հիմնուած է 1918 Դեկտ. 1ին, իր առաջին գործունէութիւնը սկսած է Շիշիի «Էթֆալ» (Մանուկներու) Հիւանդանոցին մէջ, ուր 10 անկողին տրամադրուած է՝ կատարուած դիմումներու վրայ։ Մասնա ծիւղին կալի և հանդերձեղինի Յանձնախումը 1100 կտոր ճերմակեղին պատրաստած է, Անորատ Յոցութեան Քոյրերու գործակցութիւնովը, 1919 Յունվ. 4ին հիմնուած Մանկանոցը առժամեայ կերպով Համազգ, Վարժարանի մէջ բացուելէ ետքը, կը հաստատուի Շիշի անողը. իշխա նութեան կողմէ գրաւուած շէնքի մէջ, ուր միջին հաշուով 50-70 որբեր պատասպարուած են, Շիշի Հիւանդանոցին մէջ ծննդարերութիւն ունեցող անտէրունջ երիտասարդ մայրեր՝ իրենց նորածիններով այս հաս տառութեան մէջ կը պատասպարուին, դիեցնելով միանդամայն ուրիշ նորա ծիններ։ Հաստատութիւնը վերջին անգամ, 1920 Օգ.ին, տեղափոխուած է Պէշիք-Թաշ, ուր անօրէն-րժիշկը՝ Տքթ. Սիսուեան Կ'այցելէ ամէն օր՝ Հարկ եղածը անօրինելու Ունի նաև իր ակնաբայժք՝ Տքթ. Անտոն պէյ։ Պատասպարուածներուն ներկայ թիւն է՝ 18 մայր, 25 աղջիկ և 28 մանչ երեխայ, համագումար 71 հոգի։ Մանաճիւղը՝ Պ. Խաչատրուբեանի նկարահանդէսին՝ Հայ Կանանց Լնկերակցութեան հետ իր գործակցուա թեան իրը 0/0 30 շահաբաժին ստացած է 600 ոսկի։ Ծնդհ. պատասպարեալ ներուն թիւը եղած է 425, Պատրաստուած են 840 գեղազիրներ։

ՍԿԻՒՏԱՐԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմնուած է 1918 Դեկտ. 1ին, Աննշան փոխարինութիւնով մը Վարձած է Ամերիկ. Աղջկ. Գոլէճի շէնքը, բնդարձակ, օդասուն և առող ծարար, ուր հիմնուած է Ապաստանարանը՝ թուրք հարէմներէ առնուած 14-18 տարեկան որբուհիները պատասպարելու համար։ Գործին հիմնար կութեանը՝ Ամերիկ. Նպաստամատոյցի Ներկայացուցիչ Միս Հուայթինկ 500 ոսկի տրամադրած է, Պատասպարեալերու միջին թիւն է 70, իրենց առողջութեան կը հսկէ Ամերիկուհի Տքթ. Կրէֆ՝ իր շարաթմական այցելութիւններով։ Սանուհիները ցորեկները կը զբաղին կարու ձեւով և ասեղնագործութիւնով։ Իսկ երիկունը ժամը 4.30—6.30 հայերէնի և թուարանութեան դասընթացքներու կը հետևին։ Ե. Կ. Բ. Բնկ.էն վարժուհի մը շարաթը երկու անգամ կու տայ անդիբերէնի և մարմաւ մարզի գասեր. 14—15 տարեկան ընդունակ սանուհիները կը դրկուին վարժարան։ Հաստատութեան կարուձեւի բաժինը կազմակերպուած է և յանձնարարութիւններ կ'ընդունի Տնարարութեան աշխատանքն ալ կը կատարուի սանուհիներուն ձեռքով։ Մինչև հիմա ամուսնալով մեկ



Հ. Կ. ԽԱՆԻ ՏՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՎՐԱՄԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԱՅԱՑ



Նողներուն թիւը եղած է 21, որոնց մեծ մասը Ամերիկաւ Մէկ քանիներ ալ մեկնած են իրենց աղջականերուն մօտ:

Սկիւտարի Մասնաճիւղը ունի նաեւ 12 անկողինոց Հիւանդանոց մը, ուր կը գարմանուին Տարագր. Կայանէն և Սկիւտարի Որբանոցէն եկած հիւանդներ: Դարմանուած են ընդամէնը 1568 հիւանդ, 283 պառկած, 1283 այցելու և տուներու մէջ և 673 դեղագիրներ պատրաստուած են:

ԳԱՏԸ-ԳԻՒՂԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հիմնուած է 1918 թեկտ. 13ին, 1919 Մարտ ամսուան ընթացքին բացած է 17 անկողինոց Հիւանդանոց մը: Ունի իր դեղարանը, ուր պատրաստուած են 6726 դեղագիրներ: Հիւանդանոցի Փոլիքլինիքին մէջ գարմանուած են 200 արտաքին հիւանդութիւններէ տառապողներ և 2682 զանազան այցելու հիւանդներ: Հիւանդանոցը մեծ ծառայութիւն մատուցած է Հայտար-Փաշալի Կայանին, գարմանելով ժանր հիւանդները և գեղ հայթայթելով ոտքի վրայ եղողներուն: Ունեցած է 201 պառկած հիւանդներ՝ որոնց 8ը Որբանոցէն, 15 ծննդաբերութիւններ, 10 վիրարուժական գործողութիւններ:

Տարագրեալներու նուազումը հարկադրեց Մասնաճիւղը՝ փակել Հիւանդանոցը, պահելով Փոլիքլինիքը, ուր բժշկական ձրի խնամք և գեղ հայթայթուի կարօններուն:

ՓՐԻՆՔԻԳՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հիմնուած է 1919 Յուլիսին թուգանակի տրամադրեց աղաւաներու գարմանումն անհրաժեշտութիւնը ամէն կողմէ զղացուելով, ձեռնարկուած է բանալ Ազգա, Խնարսն մը, և գործի սկսուած է, բժշկական յանձնարարութեան համաձայն 16 հիւանդներ պատասպարելով, տառանային եղանակին, վրաններու տակ: Ասոնցմէ բացի երկուքն որմնք Աղդ: Հիւանդանոց փախազրուած են մասնաւոր խնամք առանձաւութեաները առողջապահուած և վերադասած են իրենց աեղերը: Եղանակին վերջերը Ապաքինարանը փոխազրուած է անդւ: Եշխանութեան կողմէ գրաւուած ընդարձակ պարտեզով յատուկ շէնքին մէջ, ուր 30 անկողիններ զետեղուած են: Հաստատութեան պատասպարեալները, շոճիներուն մօտ, կը վայելին առողջարար ող և կը ստանան խնամուած մնունգ: Ապաքինարանը ունի իր մասնաւոր բժիշկը, որ մօտէն կը հակէ պատասպարեալներուն առողջութեանը: Հաստատութեան մէջ խնամուած աղաքներու թիւն է 134:

Կղզեցի 12-15ի չափ ընտանիքներ ամառուած եղանակին պարբերացը կը հայթայթեն Ազգաքինարանին ճաշը: Մասնաճիւղն տարեկան հանդէսը կատարուած է ամառը Բարեգործ: Միութեան հետ գոքծականը կը հասոյթը բաժնուած:

ՍԱՄԱԹԻԱՅԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմնուած է 1918 Դեկտ. 13ին։ Գործունէութեան սկսած է 14 անկողինոց Հիւանդանոցով մը, ուր գարմանած է Հայանուէր Միութեանէն, Ազգ. Խնամատարութենէն, Սամաթիայի Ս. Աննա Որբանոցէն։ Նարլը-Գափուի Որբանոցէն և Տարագրելոց Կայանէն՝ 3025 սուքի վրայ հիւանդներ և պատրաստած է 3600 գեղազիր։ 23 ծանր պառկած հիւանդներ իր ծախքով խնամած է Ազգ. Հիւանդանոցի մէջ և 127 հիւանդներ ալ տուներու մէջ։ Ծնունդի և Զատկի առիթով 439 աղքատներու նպաստ բաշխած է։

ԳՈՒՄ-ԳԱՓՈՒԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմնուած է 1919 օնվ. 1ին։ Իր գործունէութիւնը սկսած է գարմանելով Դպրոցակար Տիկ. Որբանոցին 20 անկողինոց Հիւանդանոցին։ Հիւանդները, թիւով 141, Դարմանած է նաև 4180 հիւանդներ, որոնց 87ը որբեր, 877 տարագիրներ, 1113ը թաղեցի հիւանդներ, 156 ծանր հիւանդներ ալ իր ծախքով զրկած է Ազգ. Հիւանդանոց։ Մասնաճիւղը բացած է գեղարան մը, Մայր Եկեղեցիի բակին մէջ, ուր կը պատրաստուին բոլոր գեղերը և որ կը ծառայէ իր Դարմանատուն։ Պատրաստած է 3917 գեղագիրներ։ Մասնաճիւղը 1919 Յունիսին ձեռնարկած է կազմելու Շարժուն Հիւանդանոց մը, Ներգաղթի պահուն յարմարագոյն վայրը զրկուելու համար։ Մասնաճիւղը մեծ հետազով հետապնդած է լրացնել վերջնական կազմակերպութիւնը Հարժուն Հիւանդանոցին, որ արդէն մեկնած պիտի ըլլար գեպի Հայաստան, եթէ վերջին գժրադարձին անկիութիւնները անկորելի չդարձնէին մեկնումը։

ՎՈՍՓՈՐԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմնուած է 1919 օնվր. 4ին։ Դարմանած է թաղին և Հայանուէր Միութեան Որբանոցին հիւանդները, 200 սոկի յատկացուցած է՝ Հայանուէրի Որբանոցին մէջ հիմնելու Դարմանատուն մը, ուր կը գարմանուին Որբանոցին և Ազգ. Ապաստանարանին որբերը, ինչպէս նաև Վոսփորի թաղերէն չքաւոր հիւանդներ՝ որոնց թիւը եղած է 367։ Պատրաստած են 2136 գեղագիրներ։


ՄԱՔԲԻ-ԳԻՒՂԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմնուած է 1919 օնվր. 4ին։ Իր գործունէութիւնը սկսած է ինամելով վերադարձող տարագիրներուն մէջ գտնուող հիւանդները, Մայիսի մէջ բացած է 8 անկողինոց գարմանատուն մը՝ թաղին Որբանոցին հիւանդ որբերուն համար։ Դարմանուած են 364 հիւանդներ և պատրաստած 412 գեղագիրներ։

Մազրի-Գիր ղի Մասնաճիւղը կազմակերպած է մեծ երեկոյթ-պարա-



କେଣ୍ଟାଗଲିବର୍ଜିନ୍ ଏବଂ ପାରିଶର୍ମିତାରେ ବୁଦ୍ଧିମତ୍ତାରେ ବୁଦ୍ଧିମତ୍ତାରେ ବୁଦ୍ଧିମତ୍ତାରେ



Հանդէս մը, առաջադրելով գործունէութեան աւելի փայլուն ծրագիր մը իրականացնել և այդ առիթով 500 սոկի գեղ հայթայթած է Հայաստանի Համար:

ԷՏԻՐՆԷ-ԳԱՓՈՒ-ԹՕՓ-ԳԱՓՈՒԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմնուած է 1919 Ապրիլ 1ին Բացի թաղին մէջ խնամած հիւանդաներէն, Ազգ. Հիւանդանոց զրկած է բաւական թիւով հիւանդներ: Իր ծախքով որբուհի մը գեղագործութիւն սորվեցուցած է՝ ամս. 9 սոկի ապրուսաց վճարելով. 1919 Յուլիսի հրդէհի միջոցին՝ հրկիցեալներուն բաժնած է հաց, ձիթապտուղ և պանիր: Մասնաճիւղը կը պահէ 20 անկողինոց Մանկանոց մը, ուր 4-7 տարեկան որբուկներ կը խնամուին և կ'ուսուցուին: Դարմանած է 220 հիւանդներ և ոչարաստած 300 գեղացիներ:

ԳԱԽԱՌԱԿԱՆ ՄԱՍՆԱՑԻՒՂԵՐ

Հ. Կ. Խաչի Գաւառական Մասնաճիւղերուն կազմութենէն իվեր գաւառներու մէջ տիրող անհանդար կացութիւններ՝ արգելք եղած է անոնց աղասի բարգաւաճումն: Սակայն անոնք կարելին ըրած են օգտագործ աշխատանք մը տալու իրենց շրջանակին: Այդ պայմաններուն հետեւանքով՝ բաւականաչափ մանրամասն տեղեկութիւններ ալ կարելի չէ եղած սուանալ անոնց գործունէութեան մասին, որով համառօտ ուրուագիծ մը միտյն կը ներկայացնի հոս:

ԱՍԱ-ԲԱԶԱՐԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Գաւառական Մասնաճիւղերու կարեւորագոյններէն մէկը եղած է Աստ-Բազարինը, որ 21 Յնվր. 1919ին հիմնուած, ունեցած է իր լաւ կազմակերպուած Հիւանդանոցը, և խնամած է քաղաքէն թէ շրջականերէն բաղմաթիւ հիւանդներ, որոնց մէջ նաեւ՝ Արմաշի Գիւղանսեսական Վարժարանի աշակերտները: Հիւանդանոցը կը պահէր 18 անկողին, վայելելով անձնուեր աշխատութիւնը 7 րժեշիններու, 4 գեղագործներու և 2 հիւանդապահուհներու: Մինչեւ 1920 Սեպտ. իւրջը գարմանած է 119 ժանր և 1200 թեթեւ հիւանդներ, Կատարուած են նաեւ վիրաբուժական գործողութիւններ, Քաղաքական գեղքերը կասեցուցած են այդ օգտաւէտ աշխատանքը:

ԻԶՄԻՐԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Իզմիրի Մասնաճիւղը միշտ թղթակցութիւն մշակած ըլլալով կեղբոնին հետ, ծանօթացուցած է իր գործունէութիւնը, որ մեծապէս զնահատելի եղած է: Նախ 700 սոկի զրկած է կեդրոն՝ հանցուելու համար հայկական բանակին: Ատանայի Մայրատունին զրկած է կտաւեղէններ, 500 սոկի արժեքով գեղ և 5 քիլօ քինին: Բժշկական առաքելութիւն մը զրկած է Տէօրթոյոլ՝ հայթայթելով անոր բոլոր գեղերը, պիտոյքը, ծախքերը, և ստանձնելով ապագայի անոր բոլոր ծախսերը,

Այդ մարմինին տրամադրած է 2500 սովի իշմիրի մէջ ալ խնամած է մեծ
թիւով հիւանդներ:

ԶԵՆԿՈՒԼՏՍԱՔԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ

Հիմուած է 1919 Յունիսին իր գործունէութիւնը առանձին կարեւ-
որութիւն ունի չ. Կ. Խաչի Մասնաճիւղերուն մէջ, որովհետեւ ան-
ըլլալով հանգրուան մը տարագրութենէ վերագարձող հայութեան,
ամենամեծ օգտակարութիւնը ունեցած է, այդ թշուտոներուն հայթայ-
թելով, նաւահանգիստ հանդիպող շոգենաւերու մէջ, անունդ, գեղ-
և դրամ:

ՏԵՐԹ-ԵՇՈՒ ՄԱՍՆԱՑԻՒՂ


Հիմուած է 1919 Մարտ 4ին, տարադիրներու վերագարձի շրջա-
նին: Տեղական միջոցներով և Ատանայէն՝ ձեռք բերած է հաղուստեղէն-
ներ՝ որբերու համար ֆազաքին ֆրանս, կառավարիչ-հրամանատարին և
չ. Բարեգործական Միութեան աջակցութիւնով հիմնած է Արհեստանոց-
մը, ուր պատրաստուած ձեռագործները գնահատութեան արժանացած
են: Ունի հիւանդանոց մը՝ վերաբուժական բաժինով՝ ուր դարմանուած-
են կիլիկեան պաշտպանութեան նուիրուած վիրաւոր զինուորներ և
տարագիր հիւանդներ:

ՏԱՐՍՈՆԻ ՄԱՍՆԱՑԻՒՂ


Հիմուած է 1919 Նոյ. 16ին: Ունի հիւանդանոց մը, ուր կը դար-
մանուին կամաւորական բանակի վիրաւոր և հիւանդ զինուորները,
ինչպէս նաեւ տարագիրներ: Դարմանոծ է 250 հիւանդներ: Պատրաստած
է 11,140 գեղագիրներ: Հիւանդանոցին մէջ տեղի ունեցած են 10 ծնքնա-
դարերու թիւներ:

* *


Հ. Կ. Խաչի միւս Մասնաճիւղերն են Ատանայի, Ագ-Հ իսարի,
Ագ-Շէհիրի, Աֆ. Գարահիսարի, Գօնիայի, Էսլի-Շէհիրի, Լուակմիշի,
Իզմիթի, Հալէպի, Հաճընի, Ժիշանի, Մալկարայի, Մաղնիսայի, Նալլո-
խանի, Ուրֆայի, Պալբէւսիրի, Պանաբըմայի, Պերկամայի, Պիլէճիկի,
Պրուսայի, Պոլուի, Ուսոսութօյի, Սէօլէօյի, Տիւզճէի, Քէօթահիսայի-
Մասնաճիւղերը, որոնք յաջորդաբար հիմնուած են 1919 տարուան-
ընթացքին, և աւելի կամ պակաս գործունէութիւն ունեցած են:
օգտակար ըլլալով տարագրութենէ վերագարձողներու: Վերը յիշուածին
համաձայն, այդ գործունէութիւնը չէ կրցած բարդաւաճիկ՝ քաղաքա-
կան գէպերու հետեւանքով և կատարուած աշխատանքին մասին ալ-
մանրամասն տեղեկութիւն ստանալ կարելի չէ եղած: Բայց այն որտա-
զին վերաբերումը՝ զոր ցոյց կուտայ իւրաքանչիւր Մասնաճիւղ՝ Կ. Խաչի
նպատակին հանդեպ, խոր վասահութիւն կը ներշնչէ թէ՝ առաջին-
եռանդուն գործունէութիւնը պիտի վերսկսի ամէն կողմ՝ անմիջապէս
որ պայմանները ներեն:




Հ. Կ. Խոր Փափակ Աշխատանքների մասին պահանջման անկանուն գործությունը




Հ. Կ. Խոր ԳԱՍԵ-ԳԻՒԴԻ Մասնավոր կուտակությունը գործադրությունը




Հ. Կ. ԽԱՅԹԻ ՎՐԱՄՔՈՒՄ ՄԱՍՆԱԿԱՏԻ ԳԱԱՀ-ԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԵՐԵԿԱՆԻ ԱՐԺԱՎԱՐԱՐՈՒՄ




Հ. Կ. ԽԱՅԹԻ ՎՐԱՄՔՈՒՄ ՄԱՍՆԱԿԱՏԻ ԳԱԱՀ-ԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄ



Հ. Կ. ԽԱԶԻ ՄԱՍՔԻ - ԳԻՒՐԻ ՄԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՆԱՏՈՒՆԸ



Հ. Կ. ԽԱԶԻ ՄԱՍՔԻ - ԳԻՒՐԻ ՄԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՆԱՏՈՒՆԸ



၇၁၄. နတ်မြန်မာ - ပန်မြန်မာ။



«Ազգային գրադարան»



NL0279471

4052

Հ. Ա. ԽՈՉԻՆ ԿԵՎՐՈՒ

ԲԵՐԱ, ԱՍՄԱԼԸ ՄԷՄՔԻՑ, ԹԻՒ 33

ՀԵՌԱՋԱՅԻՆ. ԲԵՐԱ 2216

— + + —